ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Կարս.—Բ. Թորոյեանց.—Մէկը լոյս է տեսնում այս համարում, միւսը կմնայ ապագային, երբ իր հերթը կգայ։

Պարիզ.—Ա. Զ. — Ստացանք չորրորդ երգը և բանաստեղծութիւնը, իսկ պատկերը մէջը չկար. գիրքը ուղարկեցինք։

Անապա. Մ. Շուտ.—ստացանք, մէկը յանձնեցինք ըստ պատկանելոյն, միւսները հետզհետէ կտպուին, միայն հերթին պիտի սպասեն։ Հնար չկայ բոլոր նիւթերը միանգամից տպելու։

Կարս. Ա. Բէգ-Յովսեփեան.—գրքերն ուղարկեցինք։

Արշալոյսի. Ֆէլիէտոնիստին.—

Այդ լրագրի № 55 ում գրուած է, որ Պետական Դումայի համար դրուած է Թիֆլիզի միակ պատգամաւոր Գիւտ քահ. Աղանեանի թեկնածութիւնը այստեղ, Բարդուղիմէոս Եպիսկոպոսինը Էջմիածին և Սուրմալուի գաւառների հայ ժողովրդի կողմից, իսկ Գրիգոր քահ. Սուքիասեանինը՝ Երևանի կողմից։

Արդ՝ մեզ հաստատ աղբիւրից հաղորդուած են, որ այդտեղ տեղի է ունեցել մի տպագրական սխալ. ճիշտն այն է՝ որ Երևանից ընտրուած է «Սալմանի» հայր Ղևոնդ քահ. Աթանասեանցը և Ղուբայի Միւշկիւր գաւառից ընտրուած է հանդ. Առաքել ապօր նախկին կառավարիչ Աշոտ Աթանասեանցը, այդ պաշտօնից դուրս արած լինելու արժանիքի համար, որովհետև նոյն արժանիքի համար ընտրուած էր և Էջմիածնի Ճեմարանի կողմից, բայց վերանձնաբար մերժել էր։ Իսկ Գեր. Բարդուղիմէոս եպս. Գէորգեանը Պետական կազմուելիք Դումայի անդամ լինելուց աւելի արժանիք ունի և հայոց եկեղեցուն այժմ աւելի շատ ծառայութիւն է մատուցանում, քան թէ նորա վերայ քար շպրտող ծուլութիւնից բղխած «Աշխատանք» թերթի հրատարակողները։

«Ընկեր»ին.—

«Հիւսիսափայլի թռուը, Մշակի և ուրիշ շատ հայրերի

արդի (որպէս ինքն է խոստովանուել, բայց մօր ով լինելը մնացել է անյայտ) «Ընկերը»ը գրել է «Լումայի» մասին, թէ նորանում մուրք գործեցին թէ ամենածայրայեղ ազատամիտ, թէ երդուեալ խաւարասէր գրողները և... տեղ տացան Շիրվանզադէի կեղտոտ պասկուիլները. և հաստատում է թէ *ինքը արդեօք լուրջ մարդկանց հետ գործ ունի։—*

«Լուման» հրատարակւում է արդէն 11-դ տարին, որի գրական և պատմական լուրջ յօդուածների արժէքը շատ անգամ խոստովանուել են նոյն իսկ նորա ամենասխեռիմ թշնամիները։ Այժմ Թիֆլիզում հրատարակւում է 77 հայերէն թերթ, որոնց հետ միասին ծնունդ առաւ և «Ընկերը»ը. այս թերթի խմբագրութեան Եզովպոսին առաջարկում ենք և խորհուրդ ենք տալիս ձեռք բերել այն նոր տեսակի հայելին, որ վերջերս գտել են Եւրոպայում և որևէ մէկի մասին առանց վիստերի վատաբանութիւն անելիս՝ նախ նայել այդ հայելուն, որ ցոյց է տալիս ոչ մարդու կերպարանքը, այլ նորա մտաւոր և հոգեկան պատկերը։ Այս օպերացիան անելուց յետոյ՝ մենք իրաւունք ենք տալիս նորան գրիչ առնել և ազատ գրել ինչ որ կամենայ։ Այս դէպքում երևի նորան ոչ ոք պատասխանի չի արժանացնի։ «Կեղծաւոր, նախ հանիր քո աչքի գերանը և ապա եղբօրդ աչքի չիւղը տես։»

Խմբագիր-հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Գ. ԱՂԱՆԵԱՆՑ